

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2020-4-1-Ա

ք. Երևան

29.07.2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2020 թվականի հուլիսի 29-ի նիստում քննարկեց 2020 թվականի հունիսի 8-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված «Մէգա Արարատ» ՓԲԸ-ի (Վայոց ձորի մարզ, Վայք, Ջերմուկի խճուղի 49-28) բողոքը «MEGA ARARAT NATURAL HERBAL TEA» (№20191856) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «ararat tea» («Արարատ» սննդի կոմբինատ ՍՊԸ, ք. Երևան, Արաբկիրի 29, տ. 13/1 ԱՄ, N 16613, 15.02.2011) և «АРАРАТ КОНДИТЕРСКАЯ ФАБРИКА» («Արարատ» ՍՊԸ, ք. Երևան, 0061, Մասիսի 7, ԱՄ, N 8158, 11.06.2004) բառային և համակցված ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10- ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 130-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման են համարվում նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում գրանցված բառային ապրանքային նշանի սկզբնամասը կազմող «ararat» բառն ամբողջովին ներառված է հայտարկված համակցված ապրանքային նշանի մեջ, ինչպես նաև համեմատվող համակցված ապրանքային նշանների «АРАРАТ» և «ARARAT»

բառային տարրերը, չնայած առանձին տարբերությունների, այն է՝ այբուբենի, որի տառերով գրված են բառերը, ունեն ճիշտ նույն հնչողությունը:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ: Հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է նույնատիպ ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «ararat tea» («Արարատ» սննդի կոմբինատ ՍՊԸ, ք. Երևան, Արաբկիրի 29, տ. 13/1 ԱՄ, N 16613, 15.02.2011) և «АРАРАТ КОНДИТЕРСКАЯ ФАБРИКА» («Արարատ» ՍՊԸ, ք. Երևան, 0061, Մասիսի 7, ԱՄ, N 8158, 11.06.2004) բառային և համակցված ապրանքային նշաններին:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

Մերժել արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ «MEGA ARARAT NATURAL HERBAL TEA» (No20191856) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԱԽԱԳԱՀ

ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ